ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2025 թվականի N 1757 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով, 71-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման VI գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 589-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հողամասերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու և ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ 06-007-0352-0008 կադաստրային ծածկագրի 5.31344 հա և 06-007-0063-0033 կադաստրային ծածկագրի 1.33087 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության, 06-007-0063-0020 կադաստրային

ծածկագրի 4.51549 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասերը, ինչպես նաև 06-007-0267-0002 կադաստրային ծածկագրի 4.44539 հա, 06-007-0273-0001 կադաստրային ծածկագրի 2.28181 հա և 06-007-0058-0025 կադաստրային ծածկագրի 0.29646 հա մակերեսներով անտառային նպատակային նշանակության անտառ գործառնական նշանակության հողամասերը փոխանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող 06-106-0129-0029 կադաստրային ծածկագրի 51.0086 հա, 06-007-0624-0059 կադաստրային ծածկագրի 16.74688 հա, 06-007-0624-0056 կադաստրային ծածկագրի 13.6646 հա, 06-106-0110-0017 կադաստրային ծածկագրի 22.6785 հա, 06-106-0110-0014 կադաստրային ծածկագրի 32.4306 հա, 06-007-0168-0004 կադաստրային ծածկագրի 3.2716 հա և 06-007-0168-0002 կադաստրային ծածկագրի 6.8158 հա մակերեսներով անտառային նպատակային նշանակության անտառ գործառնական նշանակության հողամասերի հետ:

2. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի (բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետի հողամասերի)՝ օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի հետ փոխանակության պայմանագրի կնքումը, անշարժ գույքի հանձնում-ընդունումը, գույքային իրավունքների պետական գրանցումը, նոտարական վավերացումը՝ դրանց հետ կապված բոլոր ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի միջոցների հաշվին.

2) սույն որոշման 1-ին կետում նշված 06-007-0267-0002 կադաստրային ծածկագրի 4.44539 հա, 06-007-0273-0001 կադաստրային ծածկագրի 2.28181 հա և 06-007-0058-0025 կադաստրային ծածկագրի 0.29646 հա մակերեսներով հողամասերի փոխանակումը իրականացնել Ստեփանավան համայնքի կողմից նպատակային նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման

հողեր գործառնական նշանակության փոխադրելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի հետ փոխանակության պայմանագրի կնքումը, անշարժ գույքի հանձնում-ընդունումը, գույքային իրավունքների պետական գրանցումը, նոտարական վավերացումը՝ դրանց հետ կապված բոլոր ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի միջոցների հաշվին.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները կատարելուց հետո մեկամսյա ժամկետում պետական սեփականություն հանդիսացող հողամասերը անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ